

Ք Ե Ո Վ Բ Ե Ց Ե Ա Յ Գ Ե Ղ Օ Ն Բ

Ն Ա Խ Ա Դ Ի Ռ Ի Թ Ի Ի Ն

Թէոկրիտոս՝ երգող տուարածական քերթուածոց՝ էր յազգէ սիրակուսացի, էն սորա Գեղօնք կամ Նուազք երեսուն թուով, պանչելի համարեալ և առ հինսն, և օրինակ նմանութեան առեալ 'ի Վիրգիլեայ հոռմայեցի քերթողէն 'ի համանուն քերթուածն իւր: Արդ յառաջնում այսր Նուագի կամ 'ի Գեղօնս՝ Հովին թիրսիս և Այծարածն խօսին ընդ միմեանս. թիրսիս առնու Նուադել տուարածօրէն զսէրն, յորում քոյ Հմուութեամբ մրցի թէոկրիտոս յառասպելական զրոյցսն և 'ի վէպս: Եւ փոխանակ երգոյն առեալ թիրսեայ պարգև այծ մի և բաժակ յԱյծարածէն՝ աւարտէ զՆուագն:

Թ Ի Ր Ս Ի Ս, Կ Ա Մ Ն Ո Ւ Ա Գ

Գ Ե Ղ Օ Ն Ա

Թիրսիս հովիւ և Այծարած

Սոսաւին ինձ, այծարած, հընչէ հեղիկ նոճին այն
Բարձրուղէ՛ջ զաղբերակամբ. քաղցր ինչ և գու նըւագես,
Յետ Պանեայ զերկրորդական տարցիս պըսակ յաղթանակ.
Լի՛թէ նա զեղլերագեղ առցէ նոխաղ, իսկ գու զայծն.
Այլ թէ նա զայծն առնուցու պարգև, և քեզ մընայ քօշ,
Եւ քօշին պարարտ է միս և համեղ յոյժ, չի կըլծեալ:

Այծարած

Ո՛վ հովիւ, քաղցրահընչին է քոյդ նըւագ քան ըղջուրն՝
Որ 'ի դահից բարձուէ վիմաց դըղբելով հոսի 'վայր,
Զի Մուսայք յաշարակէն թէ սիրեսցեն առնուլ ձիր,
Դու զամիկն առցես դառնիկ. այլ հաճեսցին թէ երբէք
Իւրեանց առնուլ զգառնիկն, հուսկ գու զորոյն առցես քեզ:

Թիրսիս

Կամիցիս, Յաւերժիւք, աստէն բաղմեալ, տըւարածդ,
Ի բըլուրս յայս հողակոյս, ուր կան մոշայքդ, գեղգեղել.
Մինչև ես տարայց զօղիս արօտականս 'ի ճարակ:

Այծարաճ

Չէ օրէն, ո՛ր խաշնարդո՛ծ, ըզմիջօրեալ չէ ըմբոն
 Յերդ մըլել. 'ի Պաննայ ակնածեսցուք, որ յորպոյն
 Դարձեալ յետս այժմ՝ աւասիկ վաստակաբեկ՝ առնու գուլ.
 Դառն է նա, և զընդամիջ նորա մածեալ կայ միշտ մաղձ.
 Այլ զի դու, Թիրսէ, դիտես ըզԴաինիդեայ վիշտ անհուն,
 Եւ գըլեալ 'ի Մուսոյից հասեր կատար արուեստին,
 Եկ աղէ, եկ ընդ կընձնեալ լիցուք 'ի նիստ. հանդիպոյ
 Պրիտպեայ և յաւերժից տղերաց դից, հովուական
 Ուր է տոթոռ և մայրկը. Թէ անդ առցես զեղգեղել,
 Ձինչ երբեմն եկեալ 'ի վէգ Գըրոմիս լիբացի,
 Տաց քեզ քօչս երկուորիս, կըթել երիցս անդուստ քեզ.
 Որ դիէ ուլս երկուորիս, զեղեալ կըրկին գալսուրանս.
 Եւ կուժ խորամիջոց 'ի մում Թեթեւ տաց ծեփեալ,
 Նորազործ, կըրկին ունկամբք, այն ինչ գործեալ երկաթով
 Ձորոյ շուրջ չըրթամբք բաղեղըն տարածի 'ի վերուստ,
 Բաղեղն՝ որ պատատուկ կայր ծըրարեալ յանթառամ.
 Ձորով՝ ծիլ ուրթոյ պըտղովք քըրքմատեսակ՝ առնու բակ:
 Ի միջի՝ կին, հրաշակերտ դից ինչ գործած քանդակի,
 Նազենի 'ի շղաշատեռ և մեհեանդ պըճնաղարդ.
 Երկուստեք արք վարսագեղք աստի լ'անտի պալքարին,
 Այլ նա ոչ շարժի ընդ բանս ընդդիմամարտըս նոցա.
 Մերթ 'ի մին յածեցուցեալ զաշն 'ի ժըմիտ՝ ակնարկէ,
 Մերթ 'ի միւսն յառէ ըզմիտս ակընկառոյց և պըշու.
 Ընդ երկար աչքն 'ի զուր հարեալ առ սէր ուռնուն մեծ:
 Ընդ նոսա և ծերունի անդընդաշու դը ձըկնորս,
 Եւ վիմուսք՝ յոր ընկենու ճեպով զուռկան իւր 'ի յորս.
 Հինաւուրց, մեծավաստակ տաժանեկոյ առն հանգոյն,
 Ասիցես սակայն բոլոր մարմնոյն ուժով զորսով դալ.
 Յըցուեալ են զպարանոցաւ շուրջանակի վըզին յիջք.
 Թէպէտ յեց յալիսըն ծեր, այլ պէս մանկան կորովի:
 Բացական խուն մի եեթ 'ի ծովատանջ ծերունւոյն,
 Գալատունկ բերկրէր այգի ողկուզազարդ խայծելովք.
 Ում մանուկ դը աղածրի անցեալ 'ի Թուփս 'ի պահ կայ.
 Ըզնովաւ աղուէք երկու. մին դեղերեալ յայգեմէջս՝
 Հարկանէ զողկոյզս հասուն, միւսն անդէն առ ետեղ
 Առ մախաղաւ դարանամուտ՝ պընդի չըտալ մանկան Թոյլ
 Մինչև նոթի ըզկեանս նորա հանցէ ունայն սընամահ:
 Ինքն անդէն հինու քըստովք հասկաց ըզվարմ զօշոտիչ,

Ի կրնին ողորահիւս, ըզմխաղէն իւր անփոյթ,
Եւ ոչ ըզտունկս ինչ հոգայ, այլ կայ զըւարթ 'ի գործել,
Այլ ականթ թուլատարր ըզբաժակաւ մածանի.
Ձըքնաղ տեսիլ եւողեան, յապուշ կըրթել ըզտեսողս,
Եւ առ այս կալիդոնեան հտու այծ մի նաւաղին
Առ 'ի գին, և կոտոր մեծ սպիտակ կաթին մակարդեալ,
Տակաւին չև 'ի շըրթանցըս ճաշակեալ, այլ կայ դեռ
Ջուտ անփորձ, զոր մըտաղիւր յօժարամիտ տաց ես քեզ,
Թէ ինձ առցես երգել ըզտարփելի մեղմ աւաչ.
Այլ ընդ քեզ ոչ յաչաղեմ. հապա սիրունդ, զի զնըւաղդ
Մի 'ի գծիսս մոռացութեան տացես 'ի չիք կորննել:

Թիրսիս

Սկիզբն առէք հովուականաց երգոց, Մուսայք պանծալիք,
Թիրսիս ծընունդ է Ետնայ, և թիրսիտեայ նըւագս այս.
Ո՛ւր էիք հարսունք յաւէրժք, 'ի սէր ծընկէր երբ Դափնիս,
Ի Պինեայ չըքնաղ հովիտըս, թէ ուրեք 'ի Պինդոս.
Ձիցէ ձեզ քան զԱնապոս մեծահոսան գետոց ուղիք,
Ոչ Ետնային դիտարանք, և Ալիդեայ ջինջ կոհակք:

Սկիզբն առէք հովուականաց երգոց, Մուսայք սիրելիք.
Ձի ըզնա եղբերուագայք, ըզնա և գայլք կոծեսցին,
Եւ մեռեալ ըզնա առիւծ 'ի թաւ մայրիս ողբասցէ:

Սկիզբն առէք հովուականաց երգոց, Մուսայք երաժիշտք.
Առ երի նորա արջառք և յոգնահոյլ կացցեն ցուրք,
Գունդագունդ դապք երնջոց և ընջըղուց 'ի կոծ մեծ:

Սկիզբն առէք հովուականաց երգոց, Մուսայք երկնայինք.
Ի լեռնէ սլացեալ նախկին Հերմէս, ասաց. ո՛վ Դափնիս,
Ըզմէ ծընկիս թալկանաս, զումք, սիրունդ, կաս կըզկաթ:

Սկիզբն առէք, Մուսայք, երգոց հովուականաց 'ի դաշնակ.
Եզնափարք ահա հասին, հովիւք խաշանց, այծարածք,
Հարցանեն ամենեքին. Ձինչ քեզ չարիք դիպեցան.
Պրիապոս մատեաւ ասաց. Ձի հէգ. Դափնիս, զի հաշիս,
Իսկ աղջկն հետիոտիւք յաղբերս, յանտառս թափառէ:

(Սկիզբն առէք հովուականաց երգոց, Մուսայք ցանկալիք)
Խընդրելով. «հ, չուառականդ 'ի սէր, և յոյժ իսկ գըժխեմ,
Դու երբեմն էիր եզնող, արդ այժարած լառն հանգոյն,
Այժարած՝ որ ըզխառնից դիտել ըզժամն կայ 'ի պահ,
Հալին աչքն, թէ հիմ և ինք չեկաց նոխազ յօղեաց դաս:

Սկիզբն առէք հովուականաց երգոց, Մուսայք դիւցայիներ.
Այսպէս դու յականելով ըզկոյս անբիծ 'ի ժըմիտ,
Արտասուեն ականողիքդ, զի չես նոցին պարակից:
Զորոց չառնէ եղողն ինչ պէտ, այլ իւրովի ցըվախճան
Կատարէ զսէր դառնութեան մինչև 'ի շունչ իւր յետին:

Սկիզբն երգոց հովուականաց առէք, Մուսայք, 'ի գեղգեղ.
Զի եհաս քաղցրիկ կիպրիս գեղածիծաղ ժըմտելով.
Լըռելեայն ծիծաղին դէմքն, այլ խոր թախիծ 'ի սըրտին.
Եւ ասէ. Զի պանծանաս, Դափնէ, ըզսէր նըլաճեւ.
Կամ թէ «չ ինքնին 'ի յաղթ սիրոյն ընկճեալ պարտեցար:

Սկիզբն երգոց հովուականաց առէք, Մուսայք, 'ի գեղգեղ.
Որում ինք կըրկնէ Դափնիս բանից դարձուածս. կիպրիս ժանտ,
Կիպրիս դու ժանտաժուտ, կիպրիս ոստի մահացուաց,
Զարեղակն յեղյեղես դու միշտ առ 'ի մէնջ թաքուցեալ.
Այլ Դափնիս և 'ի գըժօխս լիցի սիրոյ ցաւ հատու:

Սկիզբն երգոց հովուականաց առէք, Մուսայք, 'ի նըլազ.
Երթ յիդա, ուր ըզկիպրիս ասնն զուգեւ ընդ եզնողն,
Երթ գընա առ Անքիսա, անգ կիպեռիս և կաղնիք,
Անգ բըզղան զեռան մեղսւք ըզբըջակերտ մաղուք տանց:

Սկիզբն երգոց հովուականաց առէք, Մուսայք, 'ի գեղգեղ.
Աղոնիս հըրաշագեղ, զի և նա խաշն արածէ,
Արհաւիրս արկանէ շուրջ, և զհետ պընդի երէոց:

Սկիզբն երգոց հովուականաց առէք, Մուսայք, 'ի գեղգեղ.
Ալէ օն, առ Դիոմեդ հուպ մատուցեալ առնթեր,
Ասասջիր. եկ 'ի կըռիւ զի հերբեցի ըզԴափնիս:

Սկիզբն երգոց առէք, Մուսայք, հովուականաց 'ի գեղգեղ.

Ո՛վ գայլք, և շընոգայլք և որջամուտ արջք յամրեղք .
Ողջ լերուք . ո՛չ ևս այլ ես Դափնիս եզող ընդ անտառս ,
Ո՛չ ևս այլ եղէց ընդ ձեզ , կամ 'ի մայրիս և պուրակս ,
Ողջոյն , Արեթուսա , և գետք հոսեալք ըզթիմրեաւ :

Սկիզբն երգոց առէք , Մուսայք , հովուականաց 'ի գեղոնս .
Ես Դափնիս որ զայս արջառ արածէի աստ յարօտ ,
Ես Դափնիս , որ գէր ցըլուց և երընջոց տայի ջուր :

Սկիզբն երգոց առէք , Մուսայք , հովուականաց , սիրելիք .
Պան , Պան , եթէ իցէ յերկայն բարձունս լիկացի ,
Թէ յածիս աստանդական 'ի լայնանիստ Մէնալոս ,
Եկ 'ի կըղզիս Սիկելական , և թող ըզբարձր ելիկէ ,
Ուր շիրիմ՝ Լիկայոնեան կայ ցանկալի անմահից :

Յածուցէք աղէ , Մուսայք , զերգոյդ ըղձայն հովուական ,
Թագաւորս ահա եկի , զբարեյարմարն ինձ մատո
Չմոմակերտ և զմեղրաշունչ սըրինգ քաջիկ կորածայր .
Չ՝ 'ի սիրոյ աստի վարեալ ձըգիմ՝ յանդունդս գժօխոց :

Լըռեսցեն աղէ , Մուսայք , հովուականաց երգոց ձայնք .
Արդ տատասկք և մորենիք դուք՝ մանիշակ ծաղկեսիլք ,
Եւ նարգէսք բուսանիցին զեղայօրէն 'ի սարոյս .
Ամենայն միմեանց ընդդէմ . և ծառ կաղնոյն՝ բերցէ տանձ ,
Ձի զԴափնի տարցի օրհասս , և շունք՝ յեղանց քարչեսցին ,
Ու 'ի լերանց մըրցեսցի բու ընդ սոխակի դայլայլիկս :

Լըռեսցեն աղէ , Մուսայք , հովուականաց պերճ գեղօնք :
Եւ նորա զայս մրմընջեալ՝ լըռեաց հանգեաւ 'ի բանից .
Կամեցաւ Ափրօդիաէ կանգնել ըզնա ուղղաբերձ .
Այլ Բաղդին էր վըճարեալ ըզբովանդակ կենաց թելս .
Անց Դափնիս . և զսիրելին դից և հարսանց ծածկեաց գետ :

Թողլիք ըզհովուական երգոցդ , Մուսայք , ըզսըռիչս .
Բեր մատո առ իս դու զայծն և ըզբաժակն 'ի կըթեկ ,
Մուսայից հեղից նըւէր . բիւր ձեզ ողջոյն , ո՛վ Մուսայք ,
Ո՛ղջ լիք . ես ձեզ ապա ըզքաղցրագոյն առից երգ :

Այծարտօք

Ծորածոյ մեղու լըցցի բերան քո լի, ով թիրսէ,
Ծայր 'ի ծայր բըջիջը գեղցին. և յեղիւնայ քաղցրենի
Կերիցես թուզ. քան զճրպիւն գեղղեղեսցես յոյժ չընհալ.
Ահա քեզ և դաշխուրան, տես զի քանի անոյշ բոյր,
Գողջիւր, յաղբերակունս ջընջեալ սրբեալ դարնայնոյ.
Եկի աստ Կիսսեթա. կըթեա գու օն. և դուք քօջք
Մի յառնէք յօտն 'ի կոյսուեւ, զի մի նոխաղն որսասցի:

Թարգմ. Հ. Ա. Ստեփանն

ԻՒՎԱՆ ԹՈՒՐԿԵՆՆԻՎ

Ռուսիոյ մատենագրութիւնը գեռ ևս
մանուկ է հասակաւ. այս դարուս հետ
առաւ փայլելու, և 'ի սկզբան բոլորո-
վին պայրընական էր. վասն զի այն
ժամանակները լորտ Պայրընի ոգին կը
ճառագայթէր Եւրոպայի վրայ: Դառն
ճաշակ մը կենաց, ամբարիշտ և մեծա-
խորհուրդ յանդգնութիւն, տնայգ և
անարգիչ ոգիք, մեծամեծ ակընկալու-
թիւնք, ամենամեծ յուսահատութիւն.
այսպիսի էին ռուս բանաստեղծութեան
կնիքն 'ի լէրմոնտով և 'ի Բուլչիւն:
Այս մեծամիտ մարդկանց ցեղը չու-
տով անցաւ և եղբրական հարուածք
առին տարին զանոնք: Կրիթայնտով,
այս բանաստեղծից անդրանիկը, Պարս-
կաստան վճարեցաւ կոտորածի մը մէջ:
Բուլչիւն նախանձեցաւ այս գեղեցիկ և
եղազ մահուան վրայ, և ինչն ալ գըն-
տակէ մը հարուածեցաւ մենամարտու-
թեան մէջ, և մեռաւ երեսուն տարե-
կան հասակին. լէրմոնտով անկէ քանի
մը տարի վերջը Կովկաս սպաննուեցաւ
քսան և վեց տարեկան հասակին. ու
բուն համար կ'ըսէ ազգակից քննա-
դատն Բիէլինսքի թէ իրաւակնոյթիւնն

սկսէր էր զարքնուշ աւնոր վրայ: Եւ
յիրաւի երիտասարդութիւնն երազ
մ'է. Կոկոզ միայն արթնցաւ անկէ,
ապրեցաւ և հասունացաւ: Իրմով ռուս
մատենագրութիւնն յերկիր իջաւ, հաս-
տատութիւն առաւ, մարդասօտի եւ
դաւ:

Երբ Ռուսիոյ վիպասան բանաստեղծ-
ներն, որոնք սահեցան անցան. այնպի-
սի երազութեամբ զոր կիրք կը տպա-
ւորեն մարդկեղէն կենաց վրայ, և տը-
խուր ու բարձր յիշատակ մը թողու-
ցին, անդին նոր ցեղ մը թէ և վառ-
վռուն, սակայն մտաղիր և անդրադար-
ձող, աճեցաւ և ձևացուց Կոկոզի օրի-
նակին վրայ դպրոց մը, որուն ձեկտ-
մունքը վերոյիշեալ քննադատ Բիէլսքի
այս կերպով համառօտեց. « Ռուստը
պէտք է ըլլայ հաւատարիմ բացատրու-
թիւն կենաց »: Այս նորեկներն իմաս-
տութեամբ ամենայն ինչ մարդկեղէն
հասակաւ չափեցին: Կենացմէ դուրս
բան չերևակայեցին. անոնց երևակա-
յութիւնն հանգչեցաւ ճշմարտութեան
վրայ. որով աւելի ոյժ առաւ և միան-
գամայն ոչինչ նուազ չնորհր ստացաւ: